ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com
http://www.foi.am/hy/IDC/

ք. Երևան
26.10.2012

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ-ի դեմ (հիմնադիր թերթի խմբագրություն) ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզպետ Նվեր Պողոսյանի հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

07.10.2011թ. օրաթերթի թիվ 171 համարում հրապարակվել է «Մարզպետը կաշառք է վերցրել» վերնագրով հոդված, որի վիճահարույց հատվածը նշում է հետևյալը.

> *«Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն իր վարորդի միջոցով 3 հազար ԱՄՆ դոլար գումար է վերցրել՝ մարզի Թթուջուր գյուղի դպրոցի պատմության ուսուցչի՝ մրցույթում «հաղթանակ» պարգևելու համար» այս մասին «Ժողովուրդ»-ին ասաց մրցույթի մյուս մասնակից Աննա Թորոսյանը: Այն, որ սահմանամերձ Ճամբարակի շրջանն ամենաաղքատ բնակավայրերից է, բոլորին է հայտնի, բայց պարզվում է, որ մեր երկրում կան պաշտոնյաներ, այս դեպքում բարգավաճ Հայաստան կառուցող, որոնց չի հետաքրքրում, թե մարդիկ որտեղից գումար կգտնեն՝ կաշառք տալու համար: Գլխավորը՝ գումարը մտնի իրենց գրպանը: Փոխանակ այնպիսի պայմաններ ստեղծեն, որ ուսուցչի պակաս ունեցող գյուղերում մարդիկ սիրով աշխատեն, դեռ մի բան էլ կաշառք են պահանջում: Երբ այս մասին «Ժողովուրդ» թերթը հարց է տվել ԲՀԿ մամլո խոսնակ Բաղդասար Մհերյանին, վերջինս ասաց, թե նման բան չի կարող պատահել, իսկ եթե եղել է, թող մեղավորը պատժվի: Ստացվում է, որ ԲՀԿ-ն իր մարզպետի գործողությունների համար պատասխանատու չէ...»:*

Դիմելով դատարան՝ հայցվորը հայտնել է, որ հոդվածը պարունակում է զրպարտող բնույթի փաստացի հրապարակային հայտարարություններ: Որպես իրավական

պաշտպանության միջոց հայցվորը պահանջել է տպագրել հերքում, պատասխանող լրատվամիջոցից բռնագանձել 2 միլիոն ՀՀ դրամ՝ որպես զրպարտության փոխհատուցման գումար և 500.000 ՀՀ դրամ որպես դատական ծախս՝ փաստաբանների վարձատրության համար վճարման ենթակա գումար, ինչպես նաև՝ նախապես վճարված պետական տուրքի գումարը:

Պատասխանողը դատաքննության ընթացքում նշել է, որ հոդվածը հեղինակի՝ ուսուցչուհի Աննա Թորոսյանի հայտարարությունների բարեխիղճ վերարտադրությունն է, որ լրագրողն իրականացրել է իր մասնագիտական գործունեությունը և հարցազրույցը հրապարակելիս բառացիորեն վերարտադրել է ինչպես մարզպետ Նվեր Պողոսյանին կաշառք վերցնելու մեջ մեղադրող Աննա Թորոսյանի, այնպես էլ մարզպետի խոսքերը: Նման հանգամանքներում լրատվամիջոցը չի կարող պատասխանատվություն կրել բացահայտված աղբյուրից ստացված տեղեկատվության վերարտադրման համար:

Աննա Թորոսյանը դատաքննության ընթացքում հաստատել է, որ ինքն է լրատվամիջոցի կողմից տարածված հայտարարությունների հեղինակը: Դատարանում լսվել է նրա հայտարարության ձայնագրությունը: Այնուհետև նշել է, որ ինքն օրաթերթին հերքման պահանջ է ներկայացրել և վերջինս տպագրել է հերքում՝ համապատասխան մեկնաբանություններով:

Ըստ գործի նյութերի, «Ժողովուրդ» թերթում Աննա Թորոսյանի հրապարակային հայտարարությունների հիման վրա Ճամբարակի ոստիկանությունում իրականացվել է հետաքննություն ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի հատկանիշներով (սուտ մատնություն), որի շրջանակներում հարցաքննվել է Աննա Թորոսյանը: Սակայն, հաշվի առնելով, որ տպագրված հոդվածում տրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, իսկ Աննա Սուրենի Թորոսյանը հրաժարվել է ոստիկանության բաժնում հանցագործության մասին գրավոր հաղորդում տալուց՝ պատճառաբանելով, որ իր տեղեկությունները բավարար հիմքեր չունեն, գտել է, որ նրա արարքում բացակայում է սուտ մատնության հիմքով հանցակազմ և որոշել է մերժել քրեական գործի հարուցումը Գեղարքունիքի մարզի մարզպետ Նվեր Պողոսյանի վերաբերյալ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ, իսկ Աննա Սուրենի Թորոսյանի վերաբերյալ՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Վերը շարադրված փաստերի հիման վրա Գեղարքունիկի մարզի առաջին ատյանի դատարանը որոշել է հետևյալը.

- օրաթերթի կողմից ներկայացված տեղեկությունները կրել են փաստացի բնույթ,
- փաստի ապացուցման ծանրությունը կրում է լրատվամիջոցը,
- հոդվածը հրապարակելուց առաջ լրատվամիջոցը չի ձեռնարկել արդյունավետ միջոցներ տեղեկատվության իսկությունը և իրականությանը համապատասխանելը ստուգելու ուղղությամբ,
- հետևաբար, լրատվամիջոցը պատասխանատու է տարածված տեղեկությունների համար:

Փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առել, որ հայցվորի կողմից պահանջված չափով դրամական միջոցների բռնագանձումը կարող է խոչընդոտել օրաթերթի բնականոն աշխատանքը և վտանգել օրաթերթի հրատարակումը՝ արհեստականորեն սահմանափակելով լրատվության տարածումը, և այդ հիմքով 2 մլն դրամի չափով պահանջը նվազեցրել է մինչև 100,000 դրամ, իսկ փաստաբանի վարձատրության դիմաց պահանջվող 500,000 դրամի պահանջը՝ նույնպես 100,000 դրամ: Միաժամանակ դատարանը գտել է, որ փոխհատուցման չափը սահմանելիս առաջնորդվել է, ի թիվս այլ հանգամանքների, հայցվորի՝ որպես իշխանության ներկայացուցիչ հասարակական դիրքով:
Վերաքննիչ դատարանը պատասխանողի բողոքը մերժել է՝ ամբողջությամբ ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի որոշումը:

2. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խորհուրդը գտնում, է, որ սույն գործի հանգամանքների ներքո օրաթերթը տեղեկատվության **բարեխիղճ վերարտադրող** է և, հետևաբար, պետք է օգտվեր *«fair comment»* (բարեխիղճ հրապարակում) պաշտպանությունից, որն ամրագրված է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասի և 5-րդ հոդվածի մասի 2-րդ կետի դրույթներով: Ըստ առաջինի, օրաթերթը բառացիորեն վերարտադրել է տեղեկատվության աղբյուրի՝ ուսուցիչ Աննա Թորոսյանի հետ հարցազրույցի տեքստը: Սա հաստատվել է նաև վերջինիս կողմից դատարանում որպես վկա տված ցուցմունքով: Աննա Թորոսյանը ֆիզիկական անձ է, ով տեղեկատվության «հեղինակն» է՝ ըստ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի[1]: Հետևաբար, նշված անձը տեղեկատվության պատշաճ աղբյուր է[2]:

[1] ՀՀ Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. թիվ ԵԿԴ2293/02/10 քաղաքացիական գործով որոշում, էջ 14:
[2] Նույն տեղը:

Նույն նախադեպով սահմանված է նաև, որ տեղեկատվությունը բառացի կամ բարեխիղճ ներկայացնելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում ապահովել բացահայտված աղբյուրում տեղ գտած տեղեկատվության բառացի շարադրանքը կամ հրապարակել այն այնպես, որ չփոխվի ինչպես ամբողջական իմաստը, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:[3] Ինչպես արդեն նշվեց, Աննա Թորոսյանը հաստատել է դատարանում, որ լրագրողը բառացիորեն է ներկայացրել իր հայտարարությունը: Ավելին, դատական քննության ընթացքում կողմերը լսել են նաև լրագրողի կողմից վերցված հարցազրույցի ձայնագրությունը, և այդ առումով որևէ առարկություն չի արվել:

Խորհուրդը նաև նկատում է, որ հոդվածը հրապարակելիս լրագրողը միջոցներ է ձեռնարկել իր անձը տեղեկատվության հեղինակից բավարար չափով տարանջատելու համար, որպեսզի յուրաքանչյուր օբյեկտիվ ընթերցողի մոտ կասկած չմնա, որ վիճահարույց հայտարարությունների հեղինակը լրագրողը չէ:[4] Նշված հանգամանքները Խորհրդի համար համոզիչ են եզրահանգելու համար, որ օրաթերթը բարեխղճորեն վերարտադրել է պատշաճ աղբյուրից ստացված տեղեկատվությունը՝ 1087.1 հոդվածի 6-րդ մասի ներքո:

Ինչ վերաբերում է fair comment պաշտպանությանը, ապա նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի ներքո, ապա այս առումով **Խորհուրդը նկատում է**,

1. որ հանրային պաշտոնյաների կողմից պաշտոնեական լիազորությունները կատարելու վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, հատկապես, եթե դա վերաբերում է կոռուպցիայի հնարավոր դրսևորմանը, որը մի երևույթ է, որը լայնորեն տարածված է Հայաստանի Հանրապետությունում և որը հասարակական սուր մտահոգության առարկա է, բխում է հանրային գերակա շահից և լրատվամիջոցները ոչ միայն կարող են, այլ նաև պարտավոր են հանրությանը տրամադրել նման տեղեկատվություն:
2. Ըստ նույն հոդվածի երկրորդ դրույթի, տվյալ դեպքում օրաթերթը ողջամտության սահմաններում ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն ներկայացրել է այդ տվյալները: Մասնավորապես, օրաթերթը ոչ միայն ներկայացրել է Աննա Թորոսյանի տեսակետը, այլ նաև կապ է հաստատել մարզպետի և մարզպետարանի լրատվական բաժնի ղեկավարի հետ և նրանցից

[3] Նույն տեղը:

[4] Սա մի հանգամանք է, որին Խորհուրդն անդրադարձել է իր նախկին մի շարք որոշումներում: Այս առումով տե՛ս, օրինակ, ՏՎԽ-ի 6-րդ որոշումը նույն օրաթերթի դեմ ՀՀ քաղաքացի Գուրգեն Աղաջանյանի ներկայացրած հայցի կապակցությամբ:

ստացել անհրաժեշտ մեկնաբանություններ, որոնք բառացիորեն, պատշաճ վկայակոչումով ներկայացրել է հոդվածում:

Նման հանգամանքներում **Խորհուրդը գտնում է,** որ լրատվամիջոցը ողջամտության սահմաններում ձեռնարկել է բոլոր միջոցները տեղեկատվության իսկությունը և իրականությանը համապատասխանելը ստուգելու ուղղությամբ:

Այն փաստը, որ տեղեկատվության հեղինակը՝ Աննա Թորոսյանը, հոդվածի հրապարակումից մի որոշ ժամանակ անց հերքել է իր իսկ կատարած հայտարարությունների ճշմարտացիությունը, էական նշանակություն չունի, քանի որ լրագրողի կողմից ստացված տեղեկատվությունը ստուգելու պահանջը պետք է գնահատել այդ տեղեկությունը ստանալու պահին՝ տիրող իրավիճակի լույսի ներքո, այլ ոչ թե հետին հայացքով:[5] Տվյալ դեպքում հարցազրույց վերցնելու պահին լրագրողը որևէ հիմք չուներ կասկածելու տեղեկատվության հեղինակի՝ որպես աղբյուրի, հուսալիության վրա: Բացի այդ, նույնիսկ այդ դեպքում լրագրողը ճիգեր է գործադրել ստացված տեղեկությունն այլ աղբյուրի հետ՝ մարզպետի և մարզպետարանի լրատվական բաժնի հետ ստուգելու համար:

Խորհուրդն իր մտահոգությունն է հայտնում այն կապակցությամբ, որ ո՛չ առաջին ատյանի դատարանը, և ո՛չ էլ վերաքննիչ դատարանը վերը նշվածը դատական ստուգման առարկա չեն դարձրել: Դատարաններն ընդհանրապես չեն անդրադարձել *fair comment* (բարեխիղճ հրապարակում) պաշտպանությանը, այլ միայն բավարարվել են վերացական կերպով եզրահանգելով, որ քանի որ հետագայում պարզվել է, որ տարածված տեղեկատվությունը կեղծ է, լրատվամիջոցը ինքնաբերաբար կրում է պատասխանատվություն: Մինչդեռ fair comment պաշտպանությունը թույլ է տալիս լրագրողին նույնիսկ սխալվել, եթե նա գործել է բարեխղճությամբ՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվություն տարածելիս: Նշված երկու հանգամանքները դատական ստուգման առարկա չեն դարձել դատարանների կողմից:

Ինչ վերաբերում է պահանջված փոխհատուցման վերաբերյալ դատարանի դիրքորոշմանը, ապա այս առումով **Խորհուրդը գնահատում է** այն հանգամանքը, որ դատարանն էականորեն նվազեցրել է գույքային պահանջի չափը և դա պայմանավորել է լրատվամիջոցի գործունեության անվտանգությամբ:

[5] Europapress Holding D.O.O.-ն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 25333/06, 22/10/2006, § 68:

Այդուհանդերձ, **Խորհուրդը նաև իր մտահոգությունն է հայտնում** այն փաստի կապակցությամբ, որ փոխհատուցման չափը նշանակելիս դատարանը հաշվի է առել, ի թիվս այլ հանգամանքների, հայցվորի *«որպես գործադիր իշխանության ներկայացուցչի հասարակական դիրքը»*: Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-997 հայտնի որոշման մեջ նշել է, որ *«հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս»*:[6]

3. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

1. Լրատվական նյութը վերաբերում է հասարակական սուր մտահոգության երևույթին՝ պաշտոնատար անձի կողմից կոռուպցիայի ենթադրաբար դրսևորմանը: Որպես այդպիսին, լրագրողը և լրատվամիջոցը գտնվում են ազատ արտահայտվելու իրավունքի հատուկ պաշտպանության տակ, եթե գործել են բարեխղճորեն՝ լրագրողական էթիկայի նորմերի համաձայն:
2. «Ժողովուրդ» օրաթերթը վիճահարույց հոդվածը հրապարակելիս օգտվել է պատշաճ տեղեկատվական աղբյուրից և ողջամտության սահմաններում ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները տեղեկատվության ճշմարտացիությունը ստուգելու նպատակով, իսկ տեղեկատվությունը մատուցել է հավասարակշռված և բարեխիղճ եղանակով:
3. Դատական ստուգումը իրականացնելիս դատարանները հաշվի չեն առել լրագրողական ազատության այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին է բարեխիղճ հրապարակման պաշտպանությունը, որի արդյունքում դատական ստուգումը իրականացվել է թերի կերպով:
4. Փոխհատուցման չափը և անհրաժեշտությունը սահմանելիս դատարանները չէին կարող առաջնորդվել հայցվորի՝ որպես իշխանության ներկայացուցչի հասարակական դիրքով: Նման մոտեցումը հակաժողովրդավարական է:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

Մանանա Ասլամազյան -«Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

Բորիս Նավասարդյան – Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արա Ղազարյան - «Արևի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

[6] Էջ 29, § 11: